ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԵՎՈՆ ԶԱՔՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ Բ) ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Ընդունել «Լևոն Զաքոյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ֆ. Թոխյանի՝ գործի դատաքննությունն սկսելու ժամկետը հետաձգելու մասին առաջարկությունը՝ ելնելով նշված գործով ՀՀ դատական դեպարտամենտից պահանջված տեղեկատվությունն ստանալու, լրիվ և բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունից, և գործի դատաքննությունն սկսելու ժամկետը 2018 թվականի նոյեմբերի 13-ի ժամը 10.00-ից հետաձգել 2018 թվականի նոյեմբերի 27-ին՝ ժամը 10.00-ին:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 3-ի ՍԴԱՈ-60 աշխատակարգային որոշման 1-ին կետը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 նոյեմբերի 2018 թվականի
ՍԴԱՈ-77